

# Übungsarbeit Herkunftssprachenprüfung

Erster allgemeinbildender Schulabschluss

**Armenisch**

**ESA**



Name

Klasse

Datum

Erstkorrektur Unterschrift

Zweitkorrektur Unterschrift

Note/Datum

**Liebe Schülerinnen und Schüler,**

Das vorliegende Übungsheft beinhaltet Beispielaufgaben zur Herkunftssprachenprüfung. Sie sind zur Unterstützung der Vorbereitung auf die zentralen Abschlussprüfungen gedacht.

Wir wünschen viel Erfolg bei der Vorbereitung und den Prüfungen!

Name: \_\_\_\_\_

## Aufgabe I Leseverstehen

### I. Hilfreiche Urlaubstipps für junge Leute

#### Առաջադրանք.

- Կարդա՛ (1-6) վերնագրերը, այնուհետև տեքստի հատվածները (A-H):
- Գտի՛ր յուրաքանչյուր վերնագրի համար տեքստի համապատասխան հատվածը:
- Գրի՛ր ճիշտ տառերը (A-H) աջ սյունակում:
- Յուրաքանչյուր տառ կարելի է ընտրել միայն մեկ անգամ:
- Երկու տառ (տեքստի հատվածներ) ավել են:
- Կա մեկ օրինակ (0):

#### Վերնագրեր.

0	Ճանապարհորդության առաջարկներ երիտասարդների համար	Z
1	Ուսումնասիրել հայրենի տարածաշրջանը	
2	Արձակուրդի ժամանակ գնալ համերգ	
3	Խուսափել բարձր ճանապարհաձախսերից	
4	Ճանապարհորդել ընտանի կենդանու հետ	
5	Արձակուրդին զբաղվել ջրային սպորտով	
6	Արձակուրդ տարվա ցուրտ եղանակին	

#### Օրինակ.

Z	Երիտասարդները միշտ չէ, որ հետաքրքիր արձակուրդ են անցկացնում: Բայց հնարավոր է նաև այլ կերպ: Շատ տուրիստական գործակալություններ մասնագիտացված են երիտասարդների համար նախատեսված առաջարկներում: Բազմաթիվ ակումբներ և երիտասարդական կազմակերպություններ նույնպես առաջարկում են հետաքրքիր շրջագայություններ երիտասարդների համար:
---	---

Name: \_\_\_\_\_

## Տեքստի հատվածներ

<b>A</b>	Երիտասարդների համար ավտոբուսը ամենահաճախ օգտագործվող տրանսպորտային միջոցն է: Որոշ տուրիստական գործակալություններ առաջարկում են ճանապարհորդություն նաև օդանավով, սակայն այդ դեպքում այն շատ թանկ է լինում: Երիտասարդները իրենց խնայած գումարը արձակուրդի ժամանակ ավելի սիրով ծախսում են էքսկուրսիաների, սպորտային միջոցառումների կամ էլ հաջորդ խնջույքի համար:
<b>B</b>	Շների համար շատ ծանր է մեքենայով երկար ճամփորդելը: Սակայն, երբ հնարավոր չէ դրանից խուսափել, պետք է ուշադրություն դարձնել հետևյալի վրա. Անհրաժեշտ է վերցնել բավարար չափով ջուր, և ճանապարհորդության օրը կենդանուն կեր չտալ: Բացի դրանից խորհուրդ է տրվում յուրաքանչյուր երկու – երեք ժամը մեկ ընդմիջում անել և փոքրիկ զբոսանք կատարել շան հետ:
<b>C</b>	Երբ մենք մեր կարճ արձակուրդը ծովափին անցկացրեցինք, այնտեղ շատ եռուզեռ չկար: Միայն քիչ խանութներ և պանդոկներ էին դեկտեմբեր ամսին գործում: Չկար տուրիստների մեծ բազմություն, ինչը հատուկ է ամառվա ամիսներին: Ճանապարհներին միայն մի քանի հեծանվորդներ էին, և մենք ամենուր անվճար օգտագործում էինք լողափը :
<b>D</b>	Մեկ օրն էլ արդեն կարող է բավարար լինել, որպեսզի մարդ ներթափանցի օտար աշխարհ, լիովին մոռանա առօրյան և խելահեղ բաներ ձեռնարկի: Չվարճանքների այգում երեխաները և երիտասարդները կարող են անցկացնել անմոռանալի ժամանակ, իսկ մեծահասակներն էլ՝ իրենց կրկին երեխա զգալ:
<b>E</b>	Երիտասարդները ուզում են ոչ միայն նոր վայրեր տեսնել և նոր մարդկանց հետ ծանոթանալ, այլ նաև սպորտով զբաղվել, որպեսզի հանգստանան դպրոցական լարված առօրյայից: Նրանք ուզում են իրենց առույգ պահել և ուժ հավաքել: Մի քանի օրյա հեծանվային արշավները լավ առիթ են, բնության գրկում գտնվելու և միաժամանակ ֆիզիկական ակտիվությամբ զբաղվելու համար:
<b>F</b>	Ոչ բոլորն են ուզում և կարող են իրենց թույլ տալ թանկ ճամփորդություն: Նաև տանը կարելի է կազմակերպել այնպիսի արձակուրդ, որը երկար կմտա որպես լավ հիշողություն: Օրինակ կարելի է ավտոբուսով կամ երկաթուղիով մեկնել մերձակա վայրեր և ծանոթանալ տարածաշրջանին՝ երբեմն առանց կոնկրետ նպատակ ունենալու:
<b>G</b>	Մեր սրֆինգի ճամբարը նախատեսված է երեխաների, երիտասարդների և մեծահասակների համար: Մասնակիցները ըստ իրենց կարողության բաժանվում են համապատասխան խմբերի: Հողմասահքի դասընթացները տեղի են ունենում կեսօրից առաջ: Սկսնակները սովորում են սրֆինգը հենց առաջին քայլից, իսկ փորձառու մարզիկները ծանոթանում են նոր հնարների: Փոքր խմբերը և հողմասահքի փորձառու ուսուցիչները հոգ են տանում ուսման մաքսիմալ հաջողության և հաճույքի համար:
<b>H</b>	Դանիայում կարելի է արձակուրդը անցկացնել լողափին, համատեղելով ազատ ժամանցը և մշակույթը: Ռոսկիլդում 1971 թվականից սկսած տարեկան մեկ անգամ տեղի է ունենում Հյուսիսային Եվրոպայի ամենամեծ երաժշտական փառատոններից մեկը: Ռոք, փոփ, մետալ և ելեկտրո ժանրերով միջոցառմանը մասնակցում են շուրջ 115.000 այցելուներ: Փառատոնը կազմակերպվում է կամավորների կողմից և շահույթը նվիրաբերվում է բարեգործական կազմակերպություններին:

\_\_\_ / 12 P.

Name: \_\_\_\_\_

## Aufgabe II Leseverstehen

### II. Klassenfahrt mit dem Fahrrad

- Կարդա՛ հետևյալ տեքստը:
- Ճիշտ է թե սխալ: Համապատասխան վանդակում խաչ արա:

#### **Սալի Չոմեռֆելդը պատմում է մի յուրահատուկ դպրոցական ուղևորության մասին**

Հեծանվով Համբուրգից Լոնդոն – դա էր Համբուրգի դպրոցներից մեկի 9րդ դասարանի աշակերտների պլանը: 23 աշակերտ և աշակերտուհիներ իրենց երկու ուսուցիչների հետ վերադարձել են 16 օրյա հեծանվով շրջագայությունից: 15 ամյա Սալի Չոմեռֆելդը պատմում է իր տպավորությունների մասին.

Հեծանվով դեպի Մեծ Բրիտանիա ճամփորդելիս մենք անցանք Ֆրանսիայով, Լուքսեմբուրգով և Բելգիայով: Ընդհանուր առմամբ մենք տասներկու օրում հաղթահարեցինք, անցանք մոտավորապես 850 կմ ճանապարհ:

Ճանապարհին մենք գիշերել ենք քեմփինգի տարբեր վայրերում:

Լոնդոնում մենք անցկացրեցինք մնացած չորս օրը, որտեղ մենք գիշերեցինք մի դպրոցում: Այդ օրերին մենք դիտեցինք քաղաքը և այցելեցինք որոշ հայտնի տեսարժան վայրեր: Դա շատ տպավորիչ էր: Բոյուսելը, որտեղ մենք մի քանի օր առաջ էինք եղել, նույնպես հիանալի էր: Երբ մեր արձակուրդը ավարտվեց, մենք ավտոբուսով և գնացքով կրկին հետ վերադարձանք:

Հեծանիվները տուն տեղափոխվեցին ուղեկցող մեքենայով:

Երկար հեծանիվ քշելը շատ դժվար էր, հատկապես սկզբում: Իսկ ճամպրուկների համար, բարեբախտաբար, մեքենա կար: Բացի դրանից որոշ

հեծանիվներ փչացան և տեղի ունեցան փոքր վթարներ: Իսկ ընկերներիցս մեկն անգամ ստիպված եղավ որոշ ժամանակով գնալ հիվանդանոց:

Տեխնիկական խնդիրները մենք միշտ կարողանում էինք արագ լուծել, քանի որ մեզանից ոմանք իսկապես լավ էին հասկանում հեծանիվներից: Փոքր ինչ անսովորն այն էր, որ Անգլիայում աջի փոխարեն միանգամից պետք է ձախ կողմով քշեինք: Բայց դա հետաքրքիր փորձություն էր բոլորիս համար:

Ճանապարհորդության միտքը մեր ուսուցիչ Մարկուս Սալլմանին էր: Նա մեզ և մեր ծնողներին կարողացավ արագ համոզել: Պարոն Սալլմանի շնորհիվ մեր նախորդ դպրոցական ուղևորությունը նույնպես հետաքրքիր էր և արտասովոր:

Quelle: <http://www.badische-zeitung.de/freiburg/klassenfahrt-mit-dem-fahrrad-139774036.html>  
(letzter Zugriff: 21.01.2019)

Name: \_\_\_\_\_

		Ճիշտ	սխալ
<b>0</b>	<i>Աշակերտները և աշակերտուհիները պետք է անցնեն երեք երկրներով, որպեսզի հասնեն Մեծ Բրիտանիա:</i>	x	
<b>7</b>	Անգլիայում աշակերտները նաև դասապրոցեսի մասնակցեցին:		
<b>8</b>	Սալին ժամանակ ուներ Լոնդոնում տեսարժան վայրեր դիտելու:		
<b>9</b>	Սալիի համար հոգնեցուցիչ էր այն, որ նա իր պայուսակը և վրանը պետք է իր հեծանվով փոխադրեր:		
<b>10</b>	Աշակերտներից մեկը բժշկական օգնության կարիք ունեցավ:		
<b>11</b>	Փչացած հեծանիվները վերանորոգվեցին բրիտանական մի արհեստանոցում:		
<b>12</b>	Դեպի Լոնդոն դպրոցական ուղևորության հարցում պարոն Սալլմանին շատ ժամանակ էր անհրաժեշտ ծնողներին համոզելու համար:		

\_\_\_ / 12 P.

Name: \_\_\_\_\_

---

## **Aufgabe III Sprachmittlung**

### **III. Sportwoche**

**Այս առաջադրանքում հարկավոր է կարևոր ինֆորմացիան ամբողջական նախադասություններով վերարտադրել մայրենի լեզվով, և ոչ թե այն բառացի թարգմանել :**

Առաջադրանք III – Սպորտային մի ակումբ կազմակերպում է եզրափակիչ ուղևորություն հաջող մրցաշրջանից հետո: Ճանապարհորդության մասին տեղեկացվում է նամակով: Սպորտային ակումբից մի տղա, որը վերջերս է քո հայրենիքից եկել Գերմանիա, հետաքրքրվում է այդ ճամփորդությամբ: Նա չի հասկանում նամակը և խնդրում է քեզ իրեն օգնել:

Name: \_\_\_\_\_

## *SPORTVEREIN AMMELONA 1980 e. V.*

Ansprechpartner: Elke Meier, Fruchttal 20, 24219 Hamburg, Tel: 040/552343

### **Sportwoche in der Landessportschule Bad Malente vom 26. – 29.05.2019**

Liebes Mitglied,

damit die Fahrt nach Bad Malente für uns alle ein schönes Erlebnis wird, geben wir euch vor Beginn noch einige Hinweise.

Wir treffen uns am 26.05.2019 um 9.45 Uhr am Busbahnhof Ammelona. Mit einem Bus werden wir nach Bad Malente fahren und voraussichtlich am 29.05. gegen 20.00 Uhr wieder in Ammelona ankommen.

Die Unterbringung erfolgt in einem tollen Sporthotel, hauptsächlich in Dreibettzimmern. Bitte bringt eure Trainingsbekleidung und Hallenturnschuhe für die Turnhalle, angemessene Badesachen für die Schwimmhalle sowie feste Schuhe und Kleidung für draußen mit.

Bitte denkt auch an eure Rollschuhe, denn es gibt dort eine schöne Strecke zum Fahren. Ihr könnt gerne auch Skateboards oder Ähnliches mitnehmen.

Der Beitrag für die Teilnahme an der Sportwoche beträgt 130,- €. Die restlichen Kosten übernimmt der Sportverein. Der Beitrag ist sofort auf unser Konto zu überweisen.

Wir werden in dieser Woche alle viel trainieren. Wer keine Lust auf Training und Zusammensein mit anderen jungen Leuten hat, sollte lieber zu Hause bleiben. Elektronische Spiele sind während der Sportwoche nicht erlaubt. Auch Handys müssen auf den Zimmern bleiben.

Während der Sportwoche müssen alle Jugendlichen den Anweisungen der Trainer und Trainerinnen folgen. Wenn sich jemand nicht an die Regeln hält oder sich nicht am Training beteiligt, wird er oder sie nach Hause geschickt und muss abgeholt werden.

Auf dem Gelände gibt es einen kleinen Laden, in dem Getränke und belegte Brötchen gekauft werden können. Dafür ist etwas Taschengeld nötig.

Wir freuen uns auf eine schöne und erfolgreiche Fahrt.

Mit freundlichen Grüßen

Elke Meier

Nach [www.Schwimmvereinapolda.de/images/Downlad%20Dokumente/Elternbrief%20Bad%20Blankenburg.pdf](http://www.Schwimmvereinapolda.de/images/Downlad%20Dokumente/Elternbrief%20Bad%20Blankenburg.pdf)  
(letzter Zugriff 21.01.2019)



Name: \_\_\_\_\_

<b>Պատասխանները գրի՛ր քո մայրենի լեզվով:</b>		
1.	Աշակերտ	Ո՞վ է կազմակերպում ուղևորությունը: 1 P.
	Դո՛ւ	
2.	Աշակերտ	Ո՞րտեղ են այդ ընթացքում մնալու երիտասարդները: 1 P.
	Դո՛ւ	
3.	Աշակերտ	Ի՞նչ հագուստ պետք է հետս բերեմ: 2 P. Նշի՛ր երկու օրինակ:
	Դո՛ւ	
4.	Աշակերտ	Ի՞նչ կարժենա ճանապարհորդությունը ինձ համար: 1 P.
	Դո՛ւ	
5.	Աշակերտ	Ո՞րտեղ կարող եմ ընկերներիս հետ հեռախոսով խոսել: 1 P.
	Դո՛ւ	
6.	Աշակերտ	Ի՞նչ պետք է ես սիրեմ, եթե ուզում եմ մասնակցել 2 P. ճանապարհորդությանը: Նշի՛ր երկու օրինակ:
	Դո՛ւ	
7.	Աշակերտ:	Ո՞ր դեպքում կարող եմ ինձ տուն ուղարկել: 2 P. Նշի՛ր երկու օրինակ:
A	Դո՛ւ	
8.	Աշակերտ:	Ի՞նչ կարելի է տարածքում գնել: 2 P. Նշի՛ր երկու օրինակ:
	Դո՛ւ:	

\_\_\_\_ / 12 P.







